

ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈՆ 045/17

ք.Երևան

«20» փետրվարի 2017թ.

«ՖԼԵՇ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Յաշա Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Մատակարար», մի կողմից, և «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Գ.Մանասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. «Գնորդը» գնում, իսկ «Մատակարարը» վաճառում է «Գնորդին» 1250լ «Պրեմիում 95» տեսակի բենզին (հետագայում վառելիք):

1.1. Առաջարկվող վառելիքի 1 լիտրի արժեքը կազմում է «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի բենզալցակայաններում օրվա գործող գնից 10 ՀՀ դրամ պակաս:

2. «Գնորդը» պարտավորվում է նախապես փոխանցել կամ վճարել (կանխիկ) իրեն անհրաժեշտ վառելիքի քանակության արժեքի համապատասխան գումար, որի դիմաց «Մատակարարից» ստանում է համապատասխան քանակի վառելիքի կտրոններ: Կտրոնների վրա նշված քանակությունը փոփոխման ենթակա չէ՝ ներառյալ վառելիքի գների փոփոխման դեպքում:

2.1. Ըստ հաշիվ-ապրանքագրի կտրոններով իրացված վառելիքը համարվում է ի պահ «Մատակարարի» մոտ չլիցքավորված կտրոնների չափով:

3. «Մատակարարը» պարտավորվում է տրամադրել կտրոնները՝ փոխանցման գումարը իր հաշվին նստելու պահին:

4. Կտրոնները գործում են բացառապես ՀՀ տարածքում:

5. Եթե «Գնորդը» փոխանցված գումարին համարժեք քանակությունից պակաս քանակության կտրոններ է վերցնում, չօգտագործված կտրոնները «Մատակարարը» ետ է վերցնում՝ հետ վերադարձնելով գնման արժեքի գումարը:

6. «Մատակարարը» պարտավորվում է բաց թողնել բարձրորակ վառելիք իր բենզալիցքավորման կայաններից:

7. Վճարումն իրականացվում է փոխանցման եղանակով կամ կանխիկ:

8. Կողմերը միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

9. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

10. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2017 թվականը:

«ՄԱՏԱԿԱՐԱՐ»

«ՖԼԵՇ» ՍՊԸ

ք.Երևան, Ե.Կողբացու 30

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հ/Հ 15100166690902

ՀՎՀՀ 01808789

Տնօրեն



Յաշա Խաչատրյան

«ԳՆՈՐԴ»

«Հայաստանի պետական

ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ

ք.Երևան, Արվյան 2

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հ/Հ 1510003927700100

ՀՎՀՀ 02519385

Տնօրեն



Գ.Մանասյան